ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2026 թվականի N 153 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱ-ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1521-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքէջերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1521-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հետո լրացնել նախաբան՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հիմք ընդունելով «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝».

2) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և վարչապետի աշխատակազմերի, պետական կառավարման համակարգի մարմինների, անկախ պետական և ինքնավար մարմինների, տարածքային կառավարման մարմինների, օրենքով սահմանված կարգով խոշորացված համայնքների, Երևան և Գյումրի համայնքների պաշտոնական կայքէջերին, դրանց սպասարկմանը և անվտանգությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին».

3) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Վարչապետի աշխատակազմի ղեկավարին, պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը իրենց կողմից ղեկավարվող մարմնի գործող պաշտոնական կայքէջերը համապատասխանեցնել սույն որոշման հավելվածով սահմանված պահանջներին:

3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկնարկած նոր պաշտոնական կայքէջերի նախագծման և տեղակայման աշխատանքները պետք է իրականացվեն բացառապես սույն որոշմամբ սահմանված տեխնիկական, ոճական, կառուցվածքային և անվտանգության պահանջներին համապատասխան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ